# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՎԱՐԴԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059

,, 30 ,, հունիսի 2011թ.

N: 081

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Վարդաձոր համայնքի ավագանու 2011թ. հունիսի 24-ի նիստի թիվ 12-Ն և 13 որոշումները:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝ Ռ.Սիրականյան

Արձանագրություն թիվ 6

24-ը հունիսի 2011թ. գ. Վարդաձոր

Կայացավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ, մասնակցությամբ ավագանու անդամներ Մ. Ավետիսյանի, Կ. Արսենյանի, Գ. Հայրապետյանի, Պ. Մելքոնյանի և Գ. Ներսիսյանի, բացակայում էին Ո. Հարությունյանը, Գ. Ղազարյանը, Ա. Մանուկյանը և Շ. Շառոյանը (անհարգելի պատճառով):
Նիստը վարեց համայնքի ղեկավար Ռ. Սիրականյանը:
Քարտուղարեց աշխատակազմի քարտուղար Կ. Շահբազյանը:

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվեց հետևյալ
Օրակարգը՝

1. Համայնքի 2011թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին,
/Զեկուցող համայնքի ղեկավար Ռ. Սիրականյան/

2. Համայնքի մշակույթի տան կաթսայատան ծխատար խողովակի ապամոնտաժելու և ոռոգման ջրատարի երկարացման համար օգտագործելու մասին:
/զեկուցող համայնքի ղեկավար Ռ. Սիրականյան/:

Օրակարգը քվեարկվեց՝ կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Համայնքի ավագանու անդամներ՝ ______ Մ. Ավետիսյան

______ Կ. Արսենյան

______ Գ. Հայրապետյան

______ Պ. Մելքոնյան

______ Գ. Ներսիսյան

Վարդաձոր համայնքի ղեկավար ______ Ռ. Սիրականյան

Աշխատակազմի քարտուղար ______ Կ. Շահբազյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ն

24-ը հունիսի 2011թ. — գ. Վարդաձոր

## *Համայնքի 2011թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի երրորդ կետով.

## Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից առաջարկած համայնքի 2011թ. տարեկան բյուջեի հետևյալ փոփոխությունները՝

1. Ապարատի նախահաշվից, հոդված 4241 կրճատել 66000 դրամ /վաթսունվեց հազար/, որից 36000 /երեսունվեց հազար/ դրամ տեղափոխել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 4241 հոդվածին, նախկին գյուղապետարանի շենքի անշարժ գույքի վկայականի ձեռքբերման համար, իսկ 30000 /երեսուն հազար/ դրամը 4823 հոդվածին՝ գյուղապետարանի կանոնադրության հաստատման և պետռեգիստրի վկայականի ձեռքբերման համար:
2. Համայնքի տարեկան բյուջեի տարեսկզբի ազատ միջոցներից 65000 /վաթսունհինգ հազար/ դրամ տեղափոխել առողջապահական ոլորտի 5134 հոդվածին, բաժին 7, խումբ 2, դաս 1, ծրագիր է գործառնական դասակարգման «Վարդաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի նոր կառուցվող մասնաշենքի գազամատակարարման թույլտվության աշխատանքները համաձայնեցված վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններում գրանցված նախագծով:

Գազամատակարարումը իրականացնել սահմանված կարգով, ապահովել գազի տնտեսության անվտանգության կանոնները:

Հարցը քվեարկվեց՝ կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Համայնքի ավագանու անդամներ՝ ______ Մ. Ավետիսյան

______ Կ. Արսենյան

______ Գ. Հայրապետյան

______ Պ. Մելքոնյան

______ Գ. Ներսիսյան

Վարդաձոր համայնքի ղեկավար՝ ______ Ռ. Սիրականյան

Աշխատակազմի Քարտուղար՝ ______ Վ. Շահբազյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13

24-ը հունիսի 2011թ. գ. Վարդաձոր

***Համայնքի մշակույթի տան կաթսայատան ծխատար խողովակի ապամոնտաժելու և ոռոգման ջրատարի երկարացման համար օգտագործելու մասին***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Թույլատրել համայնքի ենթակայության «Վարդաձորի մշակույթի կենտրոնի» կաթսայատան ծխատար խողովակը L=15մ, D=400մմ, որը կառուցման օրվանից երբեք չի շահագործվել և հետագա շահագործման հեռանկար չունի, ապամոնտաժել և տեղադրել համայնքի «Քյալա» կոչվող հատվածում, ոռոգման ջրատարի երկարացման նպատակով:

արցը քվեարկվեց՝ կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Համայնքի ավագանու անդամներ՝ ____________ Մ. Ավետիսյան

____________ Կ. Արսենյան

____________ Գ. Հայրապետյան

____________ Պ. Մելքոնյան

____________ Գ. Ներսիսյան

Վարդաձոր համայնքի ղեկավար՝ ____________ Ռ. Սիրականյան

Աշխատակազմի Քարտուղար՝ ____________ Վ. Շահբազյան